

ՆԱՄԱԿ ԽՄԱԳՐՈՒԹՅԱՆԸ

Վերջերս լույս տեսավ երկրաբանական գիտությունների թեկնածու Ս. Մ. Այվազյանի «Հնա-
յուն Հայաստանի մշակույթի պատմությունից» վերնագիրը կրող գիրքը (Երևան, «Լույս» հրատ.,
1986 թ.), որն ինձ պատճառեց խիստ տարակուսանք ու զարմանք: Այնտեղ գրչի մի հարվածով
լեղյալ են հայտարարվում գիտության մեջ յուսարանված և ճանաչում գտած պատմաբանասի-
րական ու լեզվագիտական մի շարք կարևոր եզրահանգումներ և գրանց փոխարեն առաջ են քաշ-
վում այնպիսի տեսակետներ, որոնք իմ կարծիքով անհիմն են, ոչ գիտական: Մի՞թե կարելի է
լուրջ համարել, օրինակ, հեղինակի հետևյալ թեզերը.

1. Հիքսոսները հայերի նախնիներն են:
2. Աշխարհի բոլոր ժողովուրդների այրուրենները ծագում են հիքսոսյան (այսինքն՝ հին
հայկական) այրուրենից:
3. Աշխարհում հայերը առաջինն են, որ երկաթ են ձուլել:
4. Ուրարտերեն լեզու գոյություն չունի. այն պարզապես հնագույն հայերենն է, նախագրա-
բարյան շրջանի հայերենը՝ գրված սեպագրով:
5. Ուրարտական պետություն գոյություն չի ունեցել:

Այս ու նման կարգի մյուս գրույթները Ս. Այվազյանը հրամցնում է որպես «հայտնագործու-
թյուններ» և զրանց մասին գրում է վերամբարձ, առարկություն չվերցնող, խիստ անձնագով
ստոնով ի ղեպ, ինչո՞ւ Ս. Այվազյանի գիրքը, ուր քննվում են գիտական բարդ հարցեր, լույս է
ընծայվել ոչ գիտական հրատարակչության կողմից:

Հարգելի խմբագրություն. ցանկալի է, որ Ձեր պարբերականի էջերում պարզաբանվեն վե-
րո՛ւիշյալ հարցերը մասնագետ լեզվաբանների ու պատմաբանների կողմից:

Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԽՄՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ. Մենք, ընկ. Մ. Հովհաննիսյան, համամիտ ենք Ձեզ հետ՝
Ս. Այվազյանի գաւմանալի «հայտնագործութուններէ» վերաբերյալ, «հայտնագործութուններ»,
ուրեք պարզապես բյուրիմացության հետևանք են և ոչ մի կապ չունեն գիտության հետ: Մաս
սուրբազայում մեր մասնագետները հանգամանորեն կանդիդատներն Ձեզ հետաքրքրող հարցերին: